



ՀԵՌՈՒՍՏՍԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՈՐՈՇՈՒՄ

07 հուլիսի 2022 թվականի թիվ 98-Ա

ք. Երևան

«ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2022 թվականի մայիսի 31-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 16 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովի կողմից «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս՝ Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքում արձանագրել է տեսալսողական մեդիաձառայություն մատուցող «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող կամ Ընկերություն) «Երկիր մեդիա» տեսալսողական ծրագրի կողմից 2022 թվականի մայիսի 30-ի երեքում Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով և Հանձնաժողովի՝ 2021 թվականի հուլիսի 1-ի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 109-Ա որոշմամբ ամրագրված՝ արգելված ժամանակահատվածում *«Կոռուպցիա 2. Հատուցում» ֆիլմի ընթացքում համամարդկային արժեքների նսեմացման և վարկաբեկման կադրեր, ինչպես նաև գոեհկաբանություն և հայհոյախոսություն պարունակող* տեսալսողական հաղորդման հեռարձակման սահմանափակումների խախտման փաստեր:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2022 թվականի մայիսի 31-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի կողմից Հեռարձակողի «Երկիր մեդիա» տեսալսողական ծրագրի 2022 թվականի մայիսի 30-ի տեսագրության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2022 թվականի մայիսի 31-ին կազմված Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը: Ըստ նշված արձանագրության՝ Հեռարձակողի «Երկիր մեդիա» տեսալսողական ծրագրի կողմից՝ *«2022 թվականի մայիսի 30-ին հեռարձակված «բողոքի ակցիաները Երևանում և մարզերում ջարդանակվում են» խորագրով ուղիղ միացումը պարունակում է հայհոյախոսություն, մասնավորապես՝ ժամը 14:23:45-ին «տանողի մորը ծծցնել», ժամը 14:23:47-ին՝ «բոզի տղա», ժամը 14:23:54-ին՝ «ծծցնել»:*

Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության մոնիտորինգի բաժնի կողմից սույն թվականի հունիսի 03-ին կազմվել է ևս մեկ արձանագրության՝ Հեռարձակողի «Երկիր մեդիա» տեսալսողական ծրագրի կողմից 2022 թվականի մայիսի 30-ին հեռաձևված «Կոռուպցիա 2. Հատուցում» ֆիլմի տեսագրության մշտադիտարկման արդյունքում: Համաձայն արձանագրության՝

«2022 թվականի մայիսի 30-ին հեռարձակված «Կոռուպցիա 2. Հատուցում» ֆիլմը (ֆիլմի տևողությունը՝ 21:04-21:47)՝ 21:25-ից 21:31-ը ընկած ժամանակահատվածում պարունակում է համամարդկային արժեքների նսեմացման և վարկաբեկման կադրեր, մասնավորապես՝ ծաղր Հայ Առաքելական եկեղեցու և քրիստոնեական հավատքի խորհրդանիշ խաչի, Հիսուսի կերպարի նկատմամբ: Կադրում առկա է խաչի վրա ֆիլմի «գողական աշխարհը» ներկայացնող հղփացած կերպարի մեծադիր պատկերը՝ խաչված, փշե պսակը գլխին, գլխավերևում՝ «ՏԵՐ ԶԱՎԵՆ ՓՐԿԵ ԶԱՐԵՆ» գրությամբ: Զավեն անունով կերպարը նայում է իր իսկ նկարին և խաչակնքվում՝ ասելով՝ տեր Զավեն փրկե չարեն: Այնուհետև սկսում է հարցնել սենյակում ներկաների կարծիքը, որոնք արտահայտում է հիացմունք: Իսկ սենյակ մտնողներից մեկին, ով քննադատաբար է արտահայտվում այդ երևույթի վերաբերյալ, կրակելով սպանում է, իսկ մյուսին, հրազենով սպառնալով, ստիպում է նայել նկարին և ասել՝ տեր Զավեն փրկե չարեն»:

Համաձայն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրությունը հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Հանձնաժողովը, 2022 թվականի մայիսի 31-ին հարուցված վարչական վարույթի մասին ծանուցել է Հեռարձակողին (և ի լրումն ծանուցմանը, Հեռարձակողին 06.06.2022թ-ին գրավոր տեղյակ է պահվել նաև կազմված երկրորդ արձանագրության վերաբերյալ) և հայտնել, որ վարույթի շրջանակներում կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2022 թվականի հունիսի 13-ին Հանձնաժողով ներկայացված իր պարզաբանումներում (2022 թվականի մայիսի 31-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրության հետ կապված) մասնավորապես հայտնում է.

«2022 թվականի հունիսի 03-ին արձանագրությամբ նշված ժամերին «Երկիր մեդիա» տեսալսողական ծրագիրն իրականացրել է ուղիղ հեռարձակում, որի ընթացքում ոստիկանության ուժերի կողմից ուժի գործադրման ընթացքում՝ 14:23:45-14:23:54 ժամանակահատվածում, 9 վարկյանի ընթացքում, հնչել են հայհոյանքներ: Տեղում, լարված իրավիճակում աշխատող լրագրողն օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել կանխել, կամ առավել ևս զգուշացնել նշված խառնաշփոթ իրավիճակում իրավախախտման հեղինակին, արարքի անթույլատրելիության մասին:

Ընկերությունը ցավում է անպատշաճ արտահայտություններն ուղիղ եթերով հնչեցնելու կապակցությամբ և վերահաստատում է իր դիրքորոշումը՝ գործել օրենքի պահանջների շրջանակում, հեռուստադիտողին իրադարձությունների մասին տեղեկատվությունը հնարավորինս արագ ներկայացնելու գործում»:

Հեռարձակողն իր պարզաբանման մեջ նշել է նաև, որ հայցում է Հանձնաժողովի ներողամտությունն իրենց կամքից անկախ նշված դիպվածի համար:

2022 թվականի մայիսի 31-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրության վերաբերյալ Հեռարձակողը Հանձնաժողով 2022 թվականի հունիսի 22-ին ներկայացված իր պարզաբանումներում մասնավորապես հայտնում է.

«Համաշխարհային արվեստի ամբողջ պատմությունը, անկախ արտահայտման ձևերից, ոճերից և ճաշակից, տվյալ ժամանակահատվածում տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող պատկերացումների, երևույթների և արժեհամակարգի արտացոլումն է գեղարվեստական ստեղծագործության միջոցով:(.....)Վստահեցնում եմ, որ բացասական, մերժելի ու հակահասարակական երևույթները գեղարվեստական գործերից վերացնելու դեպքում արվեստի գլուխգործոցների ճնշող մեծամասնությունը կդադարեն գոյություն ունենալուց:

Համաշխարհային արվեստի այս հնագույն մեթոդն օգտագործվում է նաև գեղարվեստական ստեղծագործությունների բոլոր ճյուղերում, անկախ նրանց ներկայացրած արժեքից ու ճաշակից: Հենց դրան են դիմել նաև մեր ընկերության կողմից ցուցադրվող «Կոռուպցիա 2. Հատուցում» ֆիլմի ստեղծողները: Ֆիլմի Ձեր մատնանշած հատվածում, որտեղ Ջավեն անունով հակահերոսը, մարմնավորելով մեր հասարակության որոշ հատվածի մեջ վերջին տարիներին արմատացած խայտառակ որոշ երևույթներ ու պատկերացումներ, փորձել է բացասական լույսի ներքո ներկայացնել դրանք: Կարծում եմ միայն աղճատված երևակայություն ու խեղված արժեհամակարգ ունենալու դեպքում է հնարավոր տվյալ տեսարանը մկնաբանել որպես «համամարդկային արժեքները, Հայ Առաքելական եկեղեցուն, ինչպես նաև Հայաստանում գրանցված և գործող այլ կրոնական կազմակերպություններին նսեմացնող և վարկաբեկող»:

Հեռարձակողը խնդրել է, որ հարուցված վարույթը այս հարցի մասով կարճել:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովն ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումներ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն»:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները»:

Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ **«Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24:00-6:00-ն: Նման հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանում է կարգավորող պետական մարմինը»:**

Հիմք ընդունելով Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը, Հանձնաժողովն 2021 թվականի հուլիսի 01-ին թիվ 109-Ա որոշումով սահմանել է անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների չափորոշիչները:

Հանձնաժողովի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 109-Ա որոշման հավելվածի 2-րդ մասի 5-րդ և 11-րդ կետերը սահմանում են.

«2. Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող են համարվում այն տեսալսողական հաղորդումները, որոնք՝

5) նսեմացնում և վարկաբեկում են համամարդկային արժեքները, Հայ Առաքելական եկեղեցուն, ինչպես նաև Հայաստանում գրանցված և գործող այլ կրոնական կազմակերպություններին,

11) պարունակում են գոեհկարանություն և հայհոյախոսություն»:

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ է, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ նախադասությամբ ամրագրված հետևյալ

սահմանափակումը՝ (...) ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները եթեր չեն կարող հեռարձակվել որոշակի ժամերին՝ 6:00-ից մինչև 24:00-ն ընկած ժամանակահատվածում:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերը, վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված փաստերը՝ ուսումնասիրության արդյունքում արձանագրում է.

- Հեռարձակողի «Երկիր մեդիա» տեսալսողական ծրագրի կողմից 2022 թվականի մայիսի 30-ին հեռարձակված **«բողոքի ակցիաները Երևանում և մարզերում շարունակվում են»** խորագրով ուղիղ միացումը պարունակում է հայհոյախոսություն, մասնավորապես՝ *ժամը 14:23:45-ին «տանողի մորը ծծեցնեն», ժամը 14:23:47-ին՝ «բողի տղա», ժամը 14:23:54-ին՝ «ծծեցնեն»* բառերը, որոնք իրենց բնույթով պարունակում են **գրեհկարանություն և հայհոյախոսություն** :

- «Կոռուպցիա 2. Հատուցում» ֆիլմը (ֆիլմի տևողությունը՝ 21:04-21:47) 21:25-ից 21:31-ը ընկած ժամանակահատվածում պարունակում է համամարդկային արժեքների նսեմացման և վարկարեկման կադրեր, մասնավորապես՝ *ժողր Հայ Առաքելական եկեղեցու և քրիստոնեական հավատքի խորհրդանիշ խաչի, Հիսուսի կերպարի նկատմամբ:*

Հանձնաժողովի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 109-Ա որոշման հավելվածի 3-րդ մասով սահմանված պահանջը նշանակում է, ժամը 6.00-24.00 ընկած ժամանակահատվածում ցուցադրվող հաղորդումները չեն կարող պարունակել անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսարաններ:

Այսպիսով, Հեռարձակողն իր պարզաբանման մեջ ընդունում է, որ 2022 թվականի մայիսի 30-ի «Երկիր մեդիա» տեսալսողական ծրագրի ուղիղ եթերում՝ **«բողոքի ակցիաները Երևանում և մարզերում շարունակվում են»** խորագրով ուղիղ միացման ժամանակ՝ ժամը 14:23:45-14:23:54 ժամանակահատվածում, հնչել են հայոյանքներ՝ չպահպանելով Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված հեռարձակման համար նախատեսված ժամային սահմանափակումը: Այս պարզաբանման մեջ նշվածի՝ «...օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել կանխել, կամ առավել ևս զգուշացնել նշված խառնաշփոթ իրավիճակում իրավախախտման հեղինակին, արարքի անթույլատրելիության մասին» կապակցությամբ փաստենք, որ ուղիղ եթերում փողոցային ակցիաները (հանրահավաքներ, բողոքի երթեր, անկարգություններ և այլն) լրագրողը, նկարահանող օպերատորը, ինչպես նաև ուղիղ եթերի հեռարձակումն ապահովող Հեռարձակողի ստեղծագործական և տեխնիկական անձնակազմը պարտավոր են պահպանել մասնագիտական մի շարք կանոններ, որոնք ուղված են սեռական բնույթի հայհոյանքի սփռումը կանխելու, ինչպես նաև պարտավոր են հատուկ տեխնիկական միջոցներով իլացնել հայհոյախառն բառամթերքը (ինչը սովորաբար անում են Հայաստանում գործող բոլոր լիցենզավորված հեռարձակողները): Եվ, այնուամենայնիվ, ուղիղ եթերն ապահովող անձնակազմի անուշադրության, մասնագիտական փորձի պակասի, կամ այլ պատճառներով այդպիսին հնչել է եթերում:

Սակայն նույն օրը՝ մայիսի 31-ին ժամը 21:25-ից 21:31-ը ընկած ժամանակահատվածում հեռարձակված «Կոռուպցիա 2. Հատուցում» ֆիլմին վերաբերվող կադրերի վերաբերյալ, ապա Հեռարձակողը պարզաբանում է, որ ֆիլմը ցուցադրվել է՝ նպատակ ունենալով բացասական լույսի ներքո ներկայացնել վերջին տարիներին արմատացած խայտառակ որոշ երևույթներ ու պատկերացումներ:

Հանձնաժողովը, վերլուծելով և գնահատելով սույն գործի հետ կապված փաստական հանգամանքները, խիստ կարևոր է համարում նաև այն հանգամանքը, որ որոշակի ժամերին անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների հեռարձակման արգելքն ըստ էության կապված է հանրային շահի հետ, որը տվյալ դեպքում, ինչպես նաև ընդհանրապես՝ իր մեջ ներառում է անչափահասների առողջությունը, մտավոր ու ֆիզիկական զարգացման վրա հնարավոր բացասական ազդեցությունից պահպանումը:

Ավելին, Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում ճանաչված է Մահմանադրության մակարդակով (ՀՀ Մահմանադրության 18-րդ հոդված 1-ին մաս): Յուրաքանչյուր երեխա ունի իր ժողովրդի պատմությանը, ավանդույթներին, հոգևոր արժեքներին և համաշխարհային մշակույթին հաղորդակցվելու իրավունք: Հանրային մուլտիպլեքսում հեռարձակումը այն հիմնական քարոզչական գործիքներից է, որը պետք է նպաստի անչափահասների բարոյական և հոգևոր դաստիարակությանը, և պետք է խստորեն պահպանել Օրենքով հեռարձակման համար նախատեսված ժամային սահմանափակումները և բացառել արգելված ժամերին խնդրո առարկա հանդիսացող նմանատիպ ֆիլմերի և տեսալսողական հաղորդումների ցուցադրումը:

Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները, որոնց նպատակը պետք է լինի կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ, այլ ոչ թե վերջին տարիներին արմատացած խայտառակ որոշ երևույթների և պատկերացումների ցուցադրմամբ, փորձել միայն բացասական օրինակներով, հայիոյանքներով և անպարկեշտ արտահայտություններով, այսինքն ներկայացնելով երևույթները բացասական լույսի ներքո (ինչպես մեկնաբանում է Հեռարձակողն իր պարզաբանման մեջ) փորձել արմատախիլ անել դրանք:

Այսպիսով, գտնում ենք, որ յուրաքանչյուր երեխայի իրավունքները և շահերը ավելի վեր պետք է լինեն, քան այս կամ այն հիմնախնդրի լուծման հրատապությունը և լրատվամիջոցներում այն օգտագործելու անհրաժեշտությունը: Ուստի յուրաքանչյուր երեխա պետք է պաշտպանված լինի ցանկացած իրավիճակում: Նրանց շահերը, անվտանգությունը պետք է գերակա լինեն խմբագրական ցանկացած պահանջների հանդեպ: Անհրաժեշտ է մշակել և գործարկել ժամանակակից աշխարհի հաճախ անվերահսկելի տեղեկատվական հոսքերի պայմաններում այնպիսի մեխանիզմներ, երեխաներին հակաբարոյական, նրանց լիարժեք ու

ներդաշնակ զարգացմանը սպառնացող տեղեկատվության տարածումից հնարավորին գերծ պահելու համար Առկա են բազմաթիվ հետազոտություններ, որոնք փաստում են, որ մեդիայում առկա գրեհկաբանությունն ու հայհոյախոսությունն ազդում են հասարակության, հատկապես անչափահասների տրամադրության, սպասումների և առհասարակ ապրելակերպի վրա, այնուամենայնիվ տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները շարունակում են ցուցադրել այդպիսի հաղորդումներ: Ուստի անհրաժեշտ է մշակել և գործարկել մեխանիզմներ՝ ժամանակակից աշխարհի հաճախ անվերահսկելի տեղեկատվական հոսքերի պայմաններում երեխաներին հակաբարոյական, նրանց լիարժեք ու ներդաշնակ զարգացմանը սպառնացող տեղեկատվության տարածումից հնարավորին գերծ պահելու համար:

Հարկ է նշել, որ միջազգային պրակտիկայում ևս անդրադարձ կա հանրային բարոյականության և, մասնավորապես, անչափահասների բարոյական դաստիարակության և այդ հարցերում պետության դերին՝ իրավաչափ համարելով կարգավորող մարմնի միջամտությունը խոսքի ազատությանը՝ ի շահ հանրային բարոյականության և, մասնավորապես, անչափահասների բարոյական և բնականոն զարգացման պաշտպանության:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի (ՄԱԿ, 1989թ.) դրույթներն արտացոլված են նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի վերջին պարբերությունը սահմանում է՝ արգելվում է երեխայի առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա բացասական ազդեցություն ունեցող, բռնության և դաժանության պաշտամունք քարոզող, մարդկային արժանապատվությունը նսեմացնող, ընտանիքը վարկաբեկող, իրավախախտումներին նպաստող զանգվածային տեղեկատվության և գրականության տարածումը:

2022 թվականի հուլիսի 07-ին՝ թիվ 16 վարչական վարույթի եզրափակիչ փուլում՝ Հանձնաժողովի նիստին ներկա էին Հեռարձակողի ներկայացուցիչները, ովքեր ևս մեկ անգամ հաստատել են վարչական վարույթի շրջանակներում 2022 թվականի մայիսի 15-ին և մայիսի 22-ին Հանձնաժողով գրավոր ներկայացված պարզաբանումները և հավելել, որ իրենց կողմից միանշանակ իրավախախտում չի եղել:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացված փաստերը և պարզաբանումները, ինչպես նաև վարչական վարույթի եզրափակիչ փուլում Հեռարձակողի ներկայացուցիչների կողմից ներկայացված փաստարկները, որոնք համադրվել են Հանձնաժողովի կողմից իրականացված դիտարկման արդյունքների հետ (Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացնում է մշտադիտարկման միջոցով և Հեռարձակողի գործունեության մշտադիտարկման արդյունքների հիման վրա 2022 թվականի մայիսի 31-ին և հունիսի 03-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց) և ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է ***Հեռարձակողի կողմից իրականացված իրավախախտում:***

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագործի կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագործի կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ Էրոտիկ բնույթի տեսալսողական հաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների եթեր հեռարձակման պահանջները խախտելը՝

«ստաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11 և 14-րդ կետերով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հանձնաժողովի «Անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող տեսալսողական հաղորդումների որոշման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 109-Ա որոշման Հավելվածի 2-րդ մասի 5-րդ և 11-րդ կետերը և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց.**

1. «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում, այն «ՀՈՒՍԱԲԵՐ» ՓԲ ընկերությանը, պատշաճ ձևով, հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈՒԹՅԱՆ

07 հուլիսի 2022թ.

ք. Երևան